Հավելված 1

Վարչության 2020թ. հոկտեմբերի 22-ի թիվ 01/078-404 Լ որոշման
Խմբագրված՝ Վարչության 2018թ. Դեկտեմբերի 27-ի թիվ 01/056- 332 Լ որոշման
Խմբագրված՝ Վարչության 2018թ. մարտի 22-ի թիվ 01/013-88 Լ որոշման
Խմբագրված՝ Վարչության 2018թ. փետրվարի 27-ի թիվ 01/009-62 Լ որոշման

Հ/Հ	Պայմաններ	Վարկային գծի արժույթ AMD
1.1	Վարկային գծի տեսակ	Մարման արտոնյալ ժամանակահատվածով վարկային գիծ
1.2	Վարկային գծի տրամադրման եղանակ	Անկանխիկ
1.3	Վարկային գծի տրամադրման ձև	Միանվագ կամ մաս-մաս
1.4	Վարկային գծի ձևակերպման վայր	Բանկի ցանկացած մասնաճյուղում (գրասենյակում) կամ գործակալի մոտ
1.5	Վարկային գծի տրամադրման ժամկետ (ամիսներով)	12-ից 120
1.6	Վարկային գծի առավելագույն սահմանաչափ*	Ամսական զուտ աշխատավարձի (դրան հավասարեցված այլ վճարների)** մինչև հնգապատիկը (աշխատավարձը (դրան հավասարեցված այլ վճարները) հարկումից հետո) Visa Gold Debit վճարային քարտից տարբերվող այլ տեսակի վճարային քարտով և վեցապատիկը Visa Gold Debit դասի քարտերով, սակայն ոչ պակաս քան 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ
1.7	Վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույք	4%
1.8	Վարկային գծի տոկոսագումարի հաշվարկման ձև***	Տոկոսագումարը հաշվարկվում է վարկային գծի օգտագործված մասի դիմաց անվանական տոկոսադրույքի կիրառման միջոցով հետևյալ բանաձևով՝ I=R*L/D, որտեղ I՝ մեկ օրվա տոկոսագումարն է R՝ անվանական տոկոսադրույքը L՝ վարկային գծի օգտագործված մասը D՝ տարվա փաստացի օրերի քանակը
1.9	Վարկային գծի ամսական սպասարկման վարձ	Պայմանագրային սկզբնական գումարի 1.3%
1.10	Տարեկան փաստացի տոկոսադրույք****	24% առավելագույնը
1.11	Ժամկետանց վարկային պարտավորությունների գծով տարեկան տոկոսադրույք	24%
1.12	Փոխհաշվարկի օր	Յուրաքանչյուր ամսվա 1-ը, եթե այլ օր չի նշվել վարկառուի առաջարկ-դիմումում
1.13	Վարկային գծի մարման կարգ	Ոչ հավասարաչափ (դիֆերենցված), պարտադիր մարման չափով
1.14	Վարկային գծի օգտագործված մասի մարման միջանկյալ ժամկետ	Յուրաքանչյուր վճարային ժամանակահատված
1.15	Վարկային գծի տոկոսների մարում	Ամսական, Վճարային ժամանակահատվածի ընթացքում

1.16	Պարտադիր մարման չափ (ըստ մարման հերթականության)	• Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերածախսի (դեբիտորական պարտք) դիմաց հաշվարկված տույժ, • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերածախս (դեբիտորական պարտք), • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Պայմանագրով և Վարկային գծի պայմանագրով նախատեսված վճարման ենթակա այլ միջնորդավճարներ, • Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված տոկոսագումար (այդ թվում նաև ժամկետին չվերադարձված Կրեդիտի դիմաց հաշվարկված տոկոս և ժամկետանց տոկոսների տույժ)՝ առկայության դեպքում, • Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված Նվազագույն մարման սահմանաչափեր՝ առկայության դեպքում, • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Վարկային գծի օգտագործված մասի դիմաց հաշվարկված (կուտակված) տոկոսագումար, • Նվազագույն մարման սահմանաչափ
1.17	Նվազագույն մարման սահմանաչափ	Հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ վարկային գծի օգտագործված մասի 10%
1.18	Վարկային գծի նվազեցման չափ	-
1.19	Վարկային գծի նվազեցման հետաձգում	-
1.20	Մարման արտոնյալ ժամանակահատված	13 օր
1.21	Վճարային ժամանակահատված	1 ամիս
1.22	Վարկային պատմության նկատմամբ պահանջներ	Հաճախորդի կողմից Բանկում և ՀՀ այլ բանկերում վարկի և (կամ) դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների մարումները մեկ տարվա ընթացքում ուշացել են ոչ ավել, քան 30 (երեսուն) օր, կամ վարկային պատմության բացակայություն, ինչպես նաև ժամկետանց պարտավորությունների կամ դասակարգման բացակայություն
1.23	Վարկային գծի երկարաձգում*****	Վարկային գիծը կարող է երկարաձգվել 60 (վաթսուն) ամսով, եթե բավարարված են ստորև նշված պահանջները՝ -Բանկում հաճախորդի Աշխատավարձային վարկային գծի և (կամ) դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների ժամկետանցի բացակայություն (նաև դասակարգման) երկարաձգման պահին, հաճախորդի կողմից նույն վարկային գծի և (կամ) դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների մարումները վերջին վեց ամսվա ընթացքում ուշացել են ոչ ավել, քան 30 (երեսուն) օր: -Երկարաձգման արդյունքում վարկային գծի տրամադրման ժամկետի վերջին օրվա դրությամբ

		հաճախորդի տարիքը բավարարում է 1.25.1 կետում նշված տարիքային սահմանափակմանը
1.24	Վարկային սահմանաչափի ավելացում	Բանկում հաճախորդի Աշխատավարձային վարկային գծի և (կամ) դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների ժամկետանցի բացակայություն, հաճախորդի կողմից վարկի և (կամ) դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների մարումները վերջին մեկ տարվա ընթացքում ուշացել են ոչ ավել, քան 30 (երեսուն) օր: Ավելացման չափը որոշվում է Բանկի հայեցողությամբ՝ հաճախորդի դիմումի կամ սպասարկման պատմության վերլուծության արդյունքում: Սահմանաչափի ավելացման ամսաթվին հաճախորդի տարիքը 1.25.1 կետում նշված տարքիային սահմանափակման առավելագույն շեմից մեկ տարի փոքր է:
1.25	Այլ պահանջներ	
1.25.1	Տարիքային սահամանափակում	Հաճախորդը պետք է վարկի հաստատման պահին լինի առնվազն 21 տարեկան, իսկ վարկի վերջնաժամկետին ոչ ավել քան-63 տարեկան:
1.25.2	Վարկային պարտավորությունների նկատմամբ պահանջներ	• Առավելագույն հնարավոր վարկային բեռը չպետք է գերազանցի ամսական զուտ աշխատավարձի քսանապատիկը: Վարկային բեռի հաշվարկում չեն ընդգրկվում հիփոթեքային վարկերի, ոսկու, անշարժ գույքի և դրամական միջոցների (ավանդի) ապահովվածությամբ վարկերի գծով պարտավորությունները: Վարկային գծի առկայության դեպքում հաշվարկում այն ներառվում է առավելագույն վարկային գծի սահմանաչափով: • Առավելագույն հնարավոր վարկային բեռը կարող է գերազանցել սույն կետում նշված չափը, եթե առկա է հաճախորդի դիմում-համաձայնությունը՝ Բանկում կամ ՀՀ այլ բանկերում գործող այլ վարկը կամ վարկային գիծը պահանջվող վարկային գծի հաշվին ամբողջությամբ մարելու վերաբերյալ՝ առավելագույնը այլ վարկի կամ վարկային գծի մարմանը ուղվող՝ նոր տրամադրվող վարկային գծի գումարի չափով: Ընդ որում սույն կետում նշվածը դիմում-համաձայնությունը պետք է համապատասխանի Բանկի պահանջներին:
1.25.3	Հաճախորդի զուտ աշխատավարձի (դրան հավասարեցված այլ վճարների) նկատմամբ պահանջներ	Հաճախորդի ամսական զուտ աշխատավարձը (դրան հավասարեցված այլ վճարները) պետք է բավարար լինի վարկային գծի նվազագույն մարման սահմանաչափի, հաշվարկված տոկոսագումարի և վարկային գծի

		ամսական սպասարկման վարձի մարման համար:
1.25.4	Քաղաքացիության և հաշվառման նկատմամբ պահանջներ	Հավատարմագրման պայմաններին բավարարող ընկերությունների աշխատակիցների համար քաղաքացիության կամ հաշվառման նկատմամբ պահանջներ չեն սահմանվում, բացառությամբ Բանկի կողմից շնորհված B դասի ընկերությունների աշխատակիցների, որոնց օտարերկրյա քաղաքացի աշխատակիցների դեպքում կարող է պահանջվել Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված հավելյալ ստուգումներ, իսկ ստուգման բացասական արդյունքի դեպքում ներկայացված առաջարկ-դիմումը կարող է մերժվել:
1.25.5	Անձնական տվյալների նկատմամբ պահանջներ	• բջջային հեռախոսահամարի առկայություն • էլեկտրոնային փոստի հասցեի առկայություն
1.25.6	Կազմակերպության նկատմամբ պահանջներ	Այն կազմակերպությունը որտեղից հաճախորդը ստանում է վարկային գծի ստացման համար հիմք հանդիսացող ամսական դրամական բավարարումը պետք է լինի Բանկի կողմից հավատարմագրված :
1.25.7	Բանկային հաշվով գործառնությունների սահմանափակումների բացակայության նկատմամբ պահանջներ	Բանկում կամ ՀՀ այլ բանկերում գործող այլ վարկը կամ վարկային գիծը պահանջվող վարկային գծի հաշվին ամբողջությամբ մարելու վերաբերյալ Հաճախորդի կողմից դիմում-համաձայնություն ներկայացվելու դեպքում՝ Վարկի տրամադրման առաջարկ-դիմումի ներկայացման, Բանկի կողմից վարկային գծի տրամադրման որոշման կայացման կամ վարկային գծի տրամադրման ժամանակ հաճախորդի հաշիվների օգտագործման նկատմամբ սահմանափակումների բացակայություն:
1.25.8	Սույն պայմանների վարկային գծի առավելագույն սահմանաչափի պահանջին բավարար չափով աշխատավարձը նույն վճարային քարտի միջոցով չստանալու դեպքում գանձվող վճար:	0 ՀՀ դրամ
	Հավատարմագրված են համարվում հետևյալ պայմաններից որևէ մեկին բավարարող կազմակերպությունները՝ - Պետական հիմնարկներ (50% և ավելի պետական մասնակցություն ունեցող կազմակերպություններ), - Վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար հրապարակած 500 ՀՀ խոշոր հարկատուներից մեկը, - ՀՀ կենտրոնական բանկի կողմից շնորհված Ա-Գ վարկանիշ և (կամ) լիցենզիա ունեցող կազմակերպություն՝ բացառությամբ գրավատների, - ՀՀ-ում գտնվող օտարերկրյա պետության դեսպանությունները կամ հյուպատոսական հիմնարկները, այլ երկրների պետական մասնակցություն ունեցող կազմակերպություններ, ինչպես նաև 50% և ավել միջազգային կազմակերպություններին կամ այլ պետություններին պատկանող կազմակերպություններ, - Վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար հրապարակած ՀՀ առաջին 50 խոշոր հարկատուներից մեկի հետ փոխկապակցված և առնվազն 1 տարվա պետական գրանցում ունեցող կազմակերպություն, - Բանկի կողմից շնորհված P կամ A դաս	

- Բանկի կողմից շնորհված B դասի ընկերություն, որը Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն ունի դրական վարկանիշ, ընդ որում՝ ընկերությունները կարող են համարվել դրական վարկանիշ ստացած վերջին հաշվետու ժամանակահատվածի Ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի հիման վրա դրական կապիտալ և շահույթ ունենալու, ինչպես նաև դասին համապատասխան նվազագույն զուտ կրեդիտային շրջանառության պարագայում:

* Տրված վարկային սահմանաչափը կարող է գերազանցել սույն կետով սահմանված առավելագույն սահմանաչափից, եթե գերազանցող մասը ձևավորվել է Բանկի կողմից միակողմանի սահմանաչափի ավելացման արդյունքում: Նույն աշխատավարձի հիման վրա կարող է տրամադրվել միայն մեկ վարկային գիծ:

**Այն դեպքում, երբ հաճախորդի զուտ աշխատավարձի (դրան հավասարեցված այլ վճարների) մասին տեղեկանք չի ներկայացվում, ապա զուտ աշխատավարձի (դրան հավասարեցված այլ վճարների) չափը որոշվում է հաճախորդի վերջին չորս ամիսների ընթացքում ստացված և աշխատավարձի վճարման նպատակով իրականացված մուտքերը վերլուծելու եղանակով: Այս դեպքում որպես զուտ աշխատավարձի չափ համարվում է վերջին չորս ամիսներին ստացված աշխատավարձերից նվազագույնը, ընդ որում՝ եթե դիտարկվող չորս ամիսներից որևէ մեկի ընթացքում հաճախորդը չի ստացել աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ վճարներ, այդ ամիսը դիտարկմանը չի մասնակցում, իսկ որպես չորրորդ ամիս դիտարկվում է նախորդողը:

Այն դեպքում, երբ հաճախորդի աշխատավարձի չափը փոփոխվել է և առավելագույն վարկային սահմանաչափը, հաճախորդի ցանկությամբ, պետք է հաշվարկվի ավելի բարձր զուտ աշխատավարձի հիման վրա՝ որպես զուտ աշխատավարձի չափ դիտարկվում է հաճախորդի գործատուի կողմից տրված աշխատավարձի չափի մասին տեղեկանքում նշված զուտ աշխատավարձը:

*** Տոկոսագումարի հաշվարկման օրինակ

Վարկային գծի սահմանաչափ – 5.000.000 ՀՀ դրամ

Օգտագործված մաս-1.825.000 ՀՀ դրամ

Վարկի տարեկան տոկոսադրույք – 20%

Տարվա օրերի քանակ – 365 օր

Օրական կուտակվող տոկոսի մեծությունը կկազմի – 1.000 ՀՀ դրամ (տոկոսագումարը կկազմի 1.825.000*20% /365=1000 ՀՀ դրամ)

**** Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգ

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է ներքոհիշյալ բանաձևով՝

$$A=\sum_{n=1}^{N}\frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է (APR),

A – Վարկային գծի գումարը (Բանկի կողմից Հաճախորդին տրամադրված Վարկային գծի սկզբնական գումարը),

n – Վարկային գծի մարմանն ուղղված վճարի թիվը,

N – Վարկային գծի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը,

Kn – Վարկային գծի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը,

Dn – Վարկային գծի տրամադրման օրից մինչև Վարկային գծի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով,

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են Վարկային գծի պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է Վարկային գծի պայմանագրի կնքման պահին՝ ենթադրելով, որ Վարկային գծի պայմանագիրը գործելու է Հաշվարկային քարտով վարկային գծի պայմանագիր կնքելու կամ Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումում նշված ժամկետում, և կողմերը պատշաճ կերպով ու

պայմանավորված ժամկետներում կատարելու են Վարկային գծի պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Մարման արտոնյալ ժամանակահատվածը (առկայության դեպքում) հաշվի չի առնվում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:

Տարվա մեջ օրերի բազային թիվը ընդունված է տարվա փաստացի օրացուցային օրերի քանակը,

Հաշվարկված տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կլորացվում է առնվազն մինչև մեկ հարյուրերորդական և բազմապատկվում է 100-ով՝ տոկոսային մեծություն ստանալու համար:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում չեն ներառվում՝

- Վճարային քարտի կամ լրացուցիչ վճարային քարտի թողարկման վարձը և քարտային հաշվի տարեկան սպասարկման վարձը,
- Կրեդիտի մարման պարտավորության խախտման և վճարային սահմանաչափի գերազանցման համար հաշվարկվող տոկոսները, տուժանքը (տույժերը և տուգանքները),
- Կանխիկացման և կանխիկի մուտքագրման համար միջնորդավճարները,
- Տարբեր տեսակի փաստաթղթերի տրամադրման համար վճարները,
- Արժույթի փոխարկման համար միջնորդավճարները:

***** Սույն կետում նշված պայմանը նախատեսվում է միայն վարկային պայմանագրով սահմանված լինելու դեպքում:

Նշված պայմաններին համապատասխանության ստուգումն իրականացվում է վարկային գծի ժամկետի ավարտից երկու ամիս առաջ:

Զգուշացում՝

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական Բանկի վարկային ռեգիստրին և ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորտինգ ՓԲԸ-ին:

Որոշման կայացման և վարկային գծի տրամադրման ժամկետները՝

Անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումից և նախնական հավանությունը ստանալուց հետո վարկային գծի տրամադրման վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է և Հաճախորդը տեղեկացվում է առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Վերջնական որոշման կայացումից հետո վարկային գիծը տրամադրվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Վարկային գծի տրամադրման գործոններն են, այդ թվում, բայց ոչ միայն, սույն վարկավորման պայմանների պահանջներին բավարարելը և փաստաթղթերի ցանկով սահմանված պատշաճ փաստաթղթեր և տեղեկատվություն տրամադրելը,

Վարկային գծի մերժման գործոններն են սույն վարկավորման պայմանների պահանջներին չբավարարելը, անարժանահավատ կամ թերի տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրումը, կամ Բանկի վարկավորման կանոններով սահմանված այլ դեպքերը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել բանկի կողմից: